

Արտյոն Օվսյան

ՀՀ գլխավոր դատախազության սեփականության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական

ԱՎԱԶԱԿՈՒԹՅՈՒՆ. ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ¹

Համառոտագիր

Հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով հափշտակության հասկացության սահմանմանը, հափշտակությունների որոշ տեսակների և, մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածով նախատեսված ավազակության հանցակազմի ուսումնասիրությանը, նշված հանցակազմի հետ կապված տեսական և գործնական որոշ խնդիրների վերհանմանը և դրանց լուծման հնարավոր եղանակների ներկայացմանը:

Հոդվածում հեղինակի կողմից ուսումնասիրության է ենթարկվել նախաքննական և դատական համապատասխան պրակտիկան, կատարվել է դրա համադրված և համակողմանի վերլուծություն, ինչի արդյունքներով ներկայացվել են օրենսդրական հետազա զարգացումներին միտված ընդհանուր դիտարկումներ և պրակտիկայի զարգացմանն ուղղված կոնկրետ առաջարկություններ:

Աշխատանքում անդրադարձ է կատարվել նաև 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի և ՀՀ գործող քրեական օրենսգրքի համադրմանը՝ հափշտակությունների և, մասնավորապես, ավազակության հանցակազմի սահմանման առանձնահատկությունների և զարգացումների դիտանկյունից, այդ թվում նաև՝ ավազակության և հափշտակության այլ տեսակների կամ դրանց որակյալ հատկանիշների տարանջատման համատեքստում:

Հիմնաբառեր– հափշտակություն, ավազակություն, բռնության գործադրում կամ դրա սպառնալիք, ավազակության որակյալ հատկանիշներ, նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկա կամ միջոց:

Ներածություն

Մինչ ՀՀ քրեական օրենսդրությամբ սահմանված հափշտակության եղանակների քննարկումը, պետք է նշել, որ հանցագործությունների քննարկվող խմբի օրենսդրական ձևակերպումներում ՀՀ քրեական նոր (գործող) օրենսգրքով² տեղի

¹Հոդվածը ներկայացվել է 30.04.2025թ., գրախոսվել է 09.06.2025թ.:

²ՀՀ քրեական օրենսգիրքն ընդունվել է 2021 թվականի մայիսի 05-ին և ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 01-ից՝ ՀՕ-199-Ն:

են ունեցել առանցքային փոփոխություններ, որոնք կապված են ինչպես նոր հասկացությունների սահմանման, այնպես էլ հափշտակության տարբեր եղանակների օրենսդրական նկարագրության մեջ կատարված փոփոխությունների հետ:

Նախևառաջ, հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսդրության պատմության մեջ առաջին անգամ ՀՀ քրեական օրենսգրքում տրվել է «հափշտակություն» հասկացության սահմանումը, ինչը, անշուշտ, առաջընթաց քայլ է, քանի որ թույլ է տալիս հստակորեն սահմանազատել հափշտակությունները համաբնույթ այլ հանցատեսակներից, օրինակ՝ շորթումից, խաբեության, վստահությունը չարաշահելու կամ ապօրինի այլ եղանակով գույքային վնաս պատճառելուց և այլն:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 16-րդ կետն ունի հետևյալ բովանդակությունը. *«Հափշտակություն՝ ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինը դարձնելը: Հափշտակությունն ավարտված է համարվում, եթե հանցավորն այդ գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել»:*

Ինչպես նկատում ենք, վերը շարադրված ձևակերպմամբ ավանդաբար հափշտակության հասկացության մեջ ներառված շահադիտական դրդումների կամ շարժառիթների մասին որևէ նշում առկա չէ: Սա ամենևին պատահական չէ և պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև հափշտակությունների մեծամասնությունը կատարվում է շահադիտական դրդումներով, սակայն գործնականում լինում են դեպքեր, երբ ուրիշի գույքն ապօրինի, անհատույց հանցավորինը կամ այլ անձինն է դարձվում այլ շարժառիթներով, օրինակ՝ վրեժի, խանդի և այլն: Բացի դրանից, շարժառիթները, դրդապատճառները և ընդհանրապես՝ մոտիվացիոն ոլորտը խորը հոգեբանական գործընթացներ են, որոնց իրական բնույթը հաճախ չի գիտակցվում անգամ հանցանք կատարած անձի կողմից, իսկ դրանք հանցակազմի հատկանիշ դարձնելն ինքնին ավելորդ անգամ բարդացնում է հանցագործությունների որակման, առանց այն էլ ոչ թեթև գործընթացը: Միևնույն ժամանակ, վերոգրյալը չի նշանակում, որ յուրաքանչյուր դեպքում չպետք է ջանքեր գործադրվեն՝ միտված հանցագործության շարժառիթները բացահայտելուն, պարզապես այդ հանգամանքները կարող են վերջարդյունքում հաշվի առնվել պատժի անհատականացման գործընթացում:

Բացի դրանից, հարկ է փաստել, որ օրենսդրորեն հստակ ֆիքսվել է հափշտակության ավարտման պահը: Ինչպես վերը նշվել է, *հափշտակությունն ավարտված է համարվում, եթե հանցավորը հափշտակված գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել:*

Սույն ձևակերպմամբ, սակայն, չի նշվել գույքի տիրապետման մասին, քանի որ, եթե հնարավոր է գույքն ապօրինի տնօրինել կամ օգտագործել, ապա ապօրինի տիրապետում հասկացությունն առարկայազուրկ է:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 17-րդ կետը սահմանում է հետևյալը. *«Հափշտակության, պատճառած գույքային վնասի կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուրի չափերը՝ սույն օրենսգրքում հափշտակված գույքի, պատճառված գույքային վնասի, հանցավոր ճանապարհով*

ծեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի մանր չափ է համարվում 500.000 Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը), խոշոր չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը չգերազանցող գումարը (արժեքը), առանձնապես խոշոր չափ է համարվում 5 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող գումարը (արժեքը), բացառությամբ սույն օրենսգրքի Հարուկ մասով նախատեսված դեպքերի»:

Այս դրույթի սահմանումը կարևոր է և այն ունակ է էապես հեշտացնելու իրավակիրառ գործունեությունը, ինչպես նաև հանցագործությունների որակման գործընթացը, իսկ դրա նախատեսմամբ՝ օրենսգրքին հաղորդվում է միասնական տրամաբանություն: Այլևս յուրաքանչյուր դեպքում կարիք չկա ուսումնասիրելու տարբեր հանցատեսակներում ներառված չափերը (հիարկե առկա են որոշակի բացառություններ), համադրելու դրանք միմյանց հետ, իսկ ՀՀ նախկին քրեական օրենսգրքում նախատեսված տարատեսակ չափերի առնչությամբ հարկ է փաստել, որ դրանք հաճախ սահմանված էին անհասկանալի և անորոշ տրամաբանությամբ՝ պրակտիկայում առաջացնելով իրավական շփոթ: Ընդ որում, նոր ձևակերպումը վերաբերելի է ոչ միայն հափշտակություններին, այլ նաև պատճառված գույքային վնասին կամ հանցավոր ճանապարհով ծեռք բերված կամ ստացված գույքի կամ օգուտի չափերին:

1. Ավազակության քրեաիրավական բնութագիրը

Անդրադառնալով հափշտակություններից մեկի՝ առավել ծանրի՝ ավազակության քրեաիրավական բնութագրին³⁾ հարկ է նկատել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի բովանդակության վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ ավազակության հանցակազմը երկօբյեկտ է. հիմնական անմիջական օբյեկտը սեփականությունն է, իսկ լրացուցիչ օբյեկտը մարդու կյանքն է կամ առողջությունը: Օբյեկտիվ կողմից դրսևորվում է բացառապես գործողությամբ, մասնավորապես, օբյեկտիվ կողմը բնութագրվում է որպես բռնություն գործադրելով կամ այն գործադրելու սպառնալիքով հափշտակության կատարում: Սուբյեկտիվ կողմից դրսևորվում է միայն ուղղակի դիտավորությամբ, որը զուգորդվում է բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով: Տվյալ հանցակազմը նյութական է, այսինքն՝ այն ավարտված է համարվում այն պահից սկսած, երբ հանցավորը գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունենում: Ավազակության սուբյեկտ կարող է հանդիսանալ ենթադրյալ հանցանքը կատարելու պահին տասնչորս տարին լրացած ցանկացած մեղսունակ ֆիզիկական անձ:

Այս կապակցությամբ դեռևս ՀՀ նախկին քրեական օրենսգրքի գործողության պայմաններում ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է. «(...) Մեջբերված քրեաիրավական դրույթի վերլուծությունից երևում է, որ ավազակությունը, երկօբյեկտ է:

³⁾Ավազակության հանցակազմն ամրագրված է ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 1-3-րդ մասերով:

յեկտր հանցակազմ է՝ հիմնական անմիջական օբյեկտը սեփականությունն է, իսկ լրացուցիչ օբյեկտը մարդու կյանքն է կամ առողջությունը:

Սուբյեկտիվ կողմից ավագակությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտարկությամբ, այսինքն՝ անձը ոչ միայն գիտակցում է, որ իր գործողություններով տուժողի կյանքի կամ առողջության համար վրանգավոր բռնություն է գործադրում կամ դա գործադրելու սպառնալիք է տալիս և բռնությունը կիրառում է գույքը հափշտակելու համար, այլև ցանկանում է կատարել այդ գործողությունները: Գույքը հափշտակելու դիտարկությունը պետք է առաջանա մինչև կյանքի կամ առողջության համար վրանգավոր ուրնագություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կատարված հարձակումը (...):⁴

Այս կապակցությամբ հարկ է ընդգծել, որ յուրաքանչյուր դեպքում անձի արարքը որպես ավագակություն որակելիս պետք է քրեական վարույթի/գործի բավարար փաստական տվյալներով հիմնավորել, թե կոնկրետ ինչում է արտահայտվել բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի բովանդակությունը:

«Բռնություն» հասկացությանը ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել էր դեռևս 2012 թվականի նոյեմբերի 1-ին Արևիկ և Ծովինար Սահակյանների գործով կայացրած որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) բռնությունը՝ որպես քրեորեն հեղափոխության արարք, դիտարկությամբ, անձի կամքին հակառակ կամ առանց նրա կամքը հաշվի առնելու կատարված ցանկացած արարք է, որի արդյունքում անձը զրկվել է կյանքից, կամ սահմանափակվել է նրա ազատությունը, կամ նրա առողջությանը վնաս է պատճառվել, կամ նրան պատճառվել է ֆիզիկական ցավ, ֆիզիկական կամ հոգեկան տառապանք»⁵:

Ներկայումս «բռնություն գործադրել» եզրույթի բովանդակությունը բացահայտված է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 9-րդ կետում, որում, մասնավորապես, տրվել է հետևյալ սահմանումը. «**Բռնություն**՝ այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով, դիտարկությամբ ֆիզիկական ներգործություն գործադրելը կամ այդ եղանակով նրան ֆիզիկական վնաս պատճառելը»:

Այսինքն՝ օրենսդրական հիշյալ կարգավորմամբ լուծվել է այն հարցը, որ բռնություն գործադրել եզրույթի ներքո անհրաժեշտ է ներառել ոչ միայն այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով ֆիզիկական վնաս պատճառելը, այլև նաև՝ այլ մարդու նկատմամբ նրա կամքին հակառակ կամ կամքն անտեսելով դիտարկությամբ ֆիզիկական ներգործություն գործադրելը, օրինակ՝ տուժողի ձեռքերն այնպես կապելը, որ ֆիզիկական վնաս, ցավ չառաջացնի և նրա գույքը հափշտակելը:

⁴Տե՛ս Ժ. Ղուկասյանի և Ա. Ղևոնդյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԷԴ/0091/01/11 որոշման 15-րդ կետը:

⁵Տե՛ս Արևիկ և Ծովինար Սահակյանների գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշման 18-րդ կետը:

Բռնություն գործադրելու սպառնալիքը հանդիսանում է հոգեբանական բռնության տարատեսակ և կարող է դրսևորվել տարբեր ձևերով՝ խոսքով, ժեստերով, զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների ցուցադրմամբ կամ այնպիսի այլ գործողությունների կատարմամբ, որոնք, ելնելով կոնկրետ գործի հանգամանքներից, տուժողի համար իրական բռնության սպառնալիք են ներկայացնում:

Սպառնալիքը մարդու նկատմամբ հոգեբանական հարկադրանքի դրսևորման ձև է՝ որևէ չարիք, անախորժություն, վնաս պատճառելու կամ բացասական այլ հետևանք առաջացնելու մտադրության վերաբերյալ տեղեկացում, խոստում, որը նպատակ է հետապնդում վախեցնել նրան, առաջացնել տագնապի, սեփական անվտանգության վերաբերյալ կասկածի, մտահոգության զգացում⁶:

Հետևաբար, այն դեպքում, երբ զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի ցուցադրումը կամ հանցավորի դրսևորած այլ գործողությունները՝ ժեստը, մարմնաշարժումը և այլն, **զուգորդված չեն տուժողի համար բռնություն գործադրելու կամ դա գործադրելու սպառնալիքի դրսևորման հետ**, արարքը ենթակա չէ որակման ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածով:

Վերոգրյալի հետ մեկտեղ անհրաժեշտ է արձանագրել, որ այն դեպքում, երբ զենքը կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկան կամ միջոցը փաստացի չի գործադրվել, սակայն կոնկրետ իրավիճակում դրանք տուժողի համար իրական վտանգ են ստեղծել (օրինակ՝ հարձակման ժամանակ հանցավորը զենքը կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկան հպում է տուժողի որովայնին, կոկորդին կամ կենսական կարևոր նշանակություն ունեցող այլ օրգաններին), արարքը պետք է որակել որպես ավագակություն: Այս եզրահանգումը հիմնված է այն հանգամանքի վրա, որ նկարագրված դեպքում տուժողի համար իրական վտանգ է ստեղծվում, քանի որ ցանկացած պահի, այդ թվում՝ տուժողի կողմից դիմադրություն ցույց տալու կամ փախուստի փորձի դեպքում հանցավորի դիտավորյալ կամ անզգույշ գործողություններով տուժողի կյանքին կամ առողջությանը կարող է վնաս պատճառվել:

Հարկ է արձանագրել նաև, որ բռնություն գործադրելու սպառնալիքն իրական չէ, եթե գործի կոնկրետ հանգամանքներով չի հիմնավորվում, թե այն իրականացնելու իրական հնարավորություն հանցավորն ունեցել է, թե՛ ոչ:

Ընդ որում, բռնություն գործադրելու սպառնալիքի իրական լինելը ենթադրում է, որ տուժողը բավարար հիմքեր պետք է ունենա վախենալու դրա իրականացումից: Այլ կերպ ասած՝ տուժողը պետք է գիտակցի, որ հանցավորի պահանջը չկատարելու դեպքում սպառնալիքն անմիջապես կիրադրվի և իր համար բռնություն կգործադրվի: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է փաստել, որ թեև սպառնալիքի

⁶Սեփականության դեմ ուղղված հանցագործություններն ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի (գիտագործական մեկնաբանություններ): Ս.Վ. Առաքելյան, Գ.Ս. Բաղդասարյան, Պ.Դ. Պետրոսյան: Եր.: Արդարադատության ակադեմիա, 2024, էջ 40:

իրական լինելը հաստատելու համար տուժողի սուբյեկտիվ ընկալման գնահատումը կարևոր է, այդուհանդերձ առաջնային նշանակություն ունի օբյեկտիվ իրադրության գնահատումը: Այլ խոսքով՝ սպառնալիքն իրական լինելու վերաբերյալ միայն տուժողի սուբյեկտիվ ընկալումը չի կարող հիմք հանդիսանալ արարքը ավազակություն որակելու համար:

Այս կապակցությամբ հարկ է արձանագրել, որ սպառնալիքի վերաբերյալ տուժողի սուբյեկտիվ ընկալումը կարող է պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով, այդ թվում՝ վերջինիս հուզական, հոգեֆիզիկական, նյարդային և առողջական վիճակով, տարիքով, զգայունության, մտավոր զարգացման աստիճանով և մի շարք այլ գործոններով: Ուստի սպառնալիքի առկայության հարցի պարզաբանման համար անհրաժեշտ է հաշվի առնել կոնկրետ գործով հաստատված բոլոր հանգամանքների համակցությունը՝ հանցագործության կատարման ժամանակը, տեղը և եղանակը, հանցագործի անձը, նրանց քանակը, տուժողի կողմից սպառնալիքի բնույթի սուբյեկտիվ ընկալումը, այնպիսի բացահայտ գործողությունների կատարումը, որոնք վկայում են ֆիզիկական բռնություն գործադրելու հանցավորի մտադրության կամ պատրաստակամության մասին և այլն:

Ինչպես նշել ենք, սուբյեկտիվ կողմից ավազակությունը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ անձը ոչ միայն գիտակցում է, որ իր գործողություններով տուժողի համար բռնություն է գործադրում կամ դա գործադրելու սպառնալիք է տալիս և բռնությունը կիրառում է գույքը հափշտակելու համար, այլև ցանկանում է կատարել այդ գործողությունները: Այս կապակցությամբ տեղին է շեշտել, որ գույքը հափշտակելու դիտավորությունը պետք է առաջանա մինչև բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը: Այլ խոսքով՝ բռնության կամ դրա սպառնալիքի գործադրումն առանց գույքին տիրանալու նպատակի չի կարող ավազակության հատկանիշ հանդիսանալ (օրինակ՝ բռնությունը կամ սպառնալիքը գործադրվում է այլ շարժառիթով (վրեժ, խանդ և այլն), որից հետո հանցավորի մոտ առաջանում է գույքը հափշտակելու դիտավորություն և հանցավորը փաստացի հափշտակում է գույքը):

2. Ավազակության (որակյալ հանցակազմի) որակման շուրջ գործնականում առաջացած որոշ խնդիրներ

Գործնականում որոշակի խնդիրներ է հարուցում ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, այն է՝ *«զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պարտաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ»* ավազակության դեպքերի որակումը, քանզի դեռևս իրավակիրառ պրակտիկայում չի ձևավորվել միասնական մոտեցում՝ առարկայի կամ միջոցի նախապես պատրաստված կամ հարմարեցված լինելու հանգամանքի մեկնաբանման հարցում:

Նախևառաջ, անհրաժեշտ է արձանագրել, որ զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրումը տուժողի գույքը հափշտակելու նպատակով պահանջելու ընթացքում դրանց փաստացի օգտագործումն է, օգտագործման

փորձը կամ դրանցով սպառնալիք տալը: Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ այն դեպքում, երբ հանցավորը զենքը կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկան կամ միջոցը փաստացի չի օգտագործել, չի փորձել օգտագործել կամ դրանցով սպառնալիք տալ, սակայն հանցավորի մոտ դրանց առկայությունը կոնկրետ դեպքում տուժողի համար ստեղծել է իրական վտանգ, արարքը ենթակա է որակման որպես հասարակ ավագակություն (<< քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 1-ին մաս):

Անդրադառնալով նախաքննական և դատական պրակտիային՝ նշենք, որ, մասնավորապես, թիվ 13139022 քրեական գործով⁷ Սուրեն Խալոյանին << քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2022 թվականի հուլիսի 20-ին և 21-ին մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված առարկայի գործադրմամբ կատարել է ավագակություններ:

2023 թվականի ապրիլի 18-ին Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել Ս.Խալոյանին մեղսագրվող արարքը վերաորակելու մասին՝ << քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 1-ին մասով: Մասնավորապես, դատական ակտը պատճառաբանվել է հետևյալ կերպ՝

«(...)Այսպես.

2022 թվականի հուլիսի 20-ին՝ ժամը 04:30-ի սահմաններում, Սուրեն Խալոյանը ավագակությամբ հափշտակություն կատարելու նպատակով, (...) պայուսակից հանել է նախապես իր հեղուկ վերցրած արթմանակին նմանվող կրակայրիչը, այն պարզել է Եզեկիել Գիլերմոյի Կոյումջեանի ուղղությամբ և բռնություն գործադրելու սպառնալիքով՝ «մանի, մանի» ասելով, պահանջել է նրանց մոտ գտնվող գումարը, որից անմիջապես հեղուկ Ռամիրո Արամ Տեոդորի Աճեմեանը վախենալով դիմել է փախուստի, Եզեկիել Գիլերմոյի Կոյումջեանը և Յան Արթուրյոյի Աջիկեանը Սուրեն Խալոյանի պահանջով վերջինիս են տվել համապատասխանաբար 40.000 << և 1.000 << դրամները, իսկ Սուրեն Խալոյանը, գումարը վերցնելով, դիմել է փախուստի:

Բացի այդ, Սուրեն Խալոյանը, ավագակությամբ հափշտակություն կատարելու նպատակով, (...) պայուսակից կիսով չափ հանելով նախապես իր հեղուկ վերցրած արթմանակին նմանվող կրակայրիչը՝ այդ կերպ Վիվեն Ռաստիսլավի Չոպակովայի և Մակրո Զվոնիմիրի Չորիչի մոտ վախի մթնոլորտ ստեղծելով ու բռնություն գործադրելու սպառնալիքով «մանի, մանի» ասելով պահանջել է նրանց մոտ գտնվող գումարը: Սույն պահին Վիվեն Ռաստիսլավի Չոպակովան վախենալով թաքնվել է Մակրո Զվոնիմիրի Չորիչի թիկունքում, իսկ վերջինս դրամապանակը բացելով փորձել է դրա մեջ գտնվող գումարը հանել, որի ընթացքում Սուրեն Խալոյանը նրա

⁷Տե՛ս թիվ ԵԴ/1380/01/22 դատական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի քրեական դատարանի՝ 18.04.2023 թվականի դատավճիռը և << վերաքննիչ քրեական դատարանի՝ 04.12.2023 թվականի որոշումը:

ծեռքից վերցնելով դրամապանակը, հանել է դրանում գտնվող 42.276 ՀՀ դրամին համարժեք 100 եվրոն և մոտ 14.000 ՀՀ դրամը ու դիմել է փախուստի:

Միննույն ժամանակ Դատարանը գալիս է հետևության, որ մեղադրյալ Սուրեն Համլեթի հալոյանի կողմից ապացուցված արարքների նկատմամբ ենթակա է կիրառման ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 1-ին մասով և ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 1-ին մասով:

(...)

Վկայակոչած իրավանորմերի և նախադեպային դիրքորոշումների համադրությամբ անդրադառնալով սույն գործի նյութերին՝ հարկ է նշել, որ Սուրեն Համլեթին մեղսագրվում է 2022 թվականի հուլիսի 20-ին և 21-ին մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված առարկայի գործադրմամբ ավազակությունների կատարում:

Մինչդեռ, հարկ է նշել, որ վերը թվարկված ապացույցների առկայության պայմաններում հնարավոր է ողջամտորեն եզրահանգել և հաստատված համարել այն, որ 2022 թվականի հուլիսի 20-ին Սուրեն Համլեթին իր մոտ գտնվող ավազակական նմանվող կրակայրիչը հանել և պարզել է եզելիել Գիլերմոյի Կույումջեանի ուղղությամբ՝ պահանջելով գումար: Իսկ 2022 թվականի հուլիսի 21-ին Սուրեն Համլեթին նույն՝ ավազակական նմանվող կրակայրիչը ընդամենը ցուցադրել է այն չափով, որպեսզի երկու տուժողների համար տեսանելի լինի այն, ինչից հետո էլ պահանջել է գումար:

Այս կապակցությամբ հարկ է նկատել այն, որ առաջին դեպքում Սուրեն Համլեթին նշված ավազակական նմանվող կրակայրիչը պարզել է տուժողի ուղղությամբ, իսկ երկրորդ դեպքում էլ, այդ կրակայրիչի մի փոքր հատված է ցուցադրել, սակայն միաժամանակ հարկ է փաստել, որ երկու դեպքում էլ տվյալ առարկան տուժողների ուղղությամբ պարզելուց և ի ցույց դնելուց բացի, որևէ այլ գործողություն չի արվել դրանով: Այսինքն՝ ասվածից ակնհայտ է, որ Սուրեն Համլեթին տվյալ առարկայով ցանկացել է տուժողների մոտ վախի զգացողություն առաջացնել՝ մասնավորապես տապալկություն ստեղծել, որ եթե օրինակ՝ վերջիններիս կողմից չկատարվի իր ներկայացված պահանջը, ապա նա կարող է կրակելու եղանակով վնաս պատճառել տուժողներին: Ասվածի մասին են վկայում թե՛ տուժողների կողմից տրված ցուցմունքները և թե՛ գործով ձեռք բերված մյուս ապացույցները: (...)

Վերոգրյալ փաստական փոխանցների համալիր վերլուծության արդյունքում Դատարանի համար ակնհայտ է դառնում, որ Սուրեն Համլեթին երկու դեպքում էլ ավազակական նմանվող կրակայրիչով ցանկացել է տուժողների մոտ տապալկություն թողնել, որ այդ առարկան իրական զենք է հանդիսանում, ինչը փաստացի նրան հաջողվել է և արդյունքում էլ կարողացել է հենց այդ հանգամանքով էլ տուժողների մոտ ստեղծել վախի մթնոլորտ և կոտրել վերջիններիս կողմից դիմադրելու հնարավորությունը: Ընդ որում, հարկ է փաստել, որ իրական զենքի տապալկություն թողնելը ոչ միայն պայմանավորված է տուժողների սուբյեկտիվ ընկալմամբ, այլ Դատարանի գնահատմամբ այդպիսի տապալկությունը սույն գործով ձեռք բերված ապացույցների պայմաններում կարող է դիտարկվել նաև

օբյեկտիվ իրականության մեջ: Որպես ասվածի հիմնավորում հարկ է նկատել, որ երկու դեպքում էլ հանցագործությունները կատարվել են գիշերվա ուշ ժամերին՝ ժամը 04:30-ի և ժամը 04:20-ի սահմաններում: Տուժողները հանդիսացել են օտարերկրյա քաղաքացիներ, ովքեր առաջին անգամ են գտնվել ՀՀ-ում, վերջիններս որևէ կերպով ծանոթ չեն եղել Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի տարածքներին՝ նույնիսկ առաջին դեպքում հենց Սուրեն Խալոյանից են հարցրել իրենց փաստացի ժամանակավոր բնակվելու վայրը՝ «Անի Պլազա» հյուրանոցի գտնվելու վայրը: Ասվածի հետ զուգահեռ հարկ է հաշվի առնել նաև տուժողների տարիքը, սեռը և այլն: Այլ կերպ՝ վերը թվարկված հանգամանքների ամբողջական վերլուծության արդյունքում Դատարանը գալիս է այն եզրահանգման, որ այդ պայմաններում օբյեկտիվ իրականության մեջ տուժողները ողջամտորեն կարող էին ընկալել, որ Սուրեն Խալոյանի կողմից օգտագործվող ավրճանակին նմանվող կրակայրիչը կարող էր լինել որպես իրական զենք:

Անդրադառնալով զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պարտաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ ավազակության հանցակազմի առկայությանը, ապա տվյալ դեպքում Դատարանը նախ արձանագրում է, որ ավազակության հանցակազմի հասարակ և որակյալ տեսակների ընդհանրությունն այն է, որ երկու դեպքում էլ տրվում է կյանքի և առողջության համար բռնություն գործադրելու սպառնալիք, սակայն որակյալ տեսակի դեպքում սպառնալիքն անմիջականորեն կապվում է զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պարտաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրման հետ: Մինչդեռ, Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում այդ իրավիճակն առկա չի եղել, քանի որ նշված կրակայրիչ ավրճանակը նախևառաջ չի հանդիսացել զենք: Ինչ վերաբերում է վերը նշված առարկան որպես մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պարտաստված կամ հարմարեցված առարկա կամ միջոց դիտարկելու հանգամանքին, ապա հարկ է արձանագրել, որ քրեական գործում առկա չեն փաստական տվյալներ առ այն, որ տվյալ կրակայրիչ ավրճանակը Սուրեն Համլետի Խալոյանի կողմից որևէ կերպով նախապես հարմարեցվել է դրանով իսկ տուժողների մարմնական վնասվածք պատճառելուն, քանի որ վերը նշված պարբերություններով բերված պատճառաբանությունների առկայությամբ հնարավոր է ողջամտորեն եզրահանգել, որ այդ առարկայով Սուրեն Խալոյանը ցանկացել է միայն տպավորություն ստեղծել, որ այն իրական զենք է, այլ ոչ թե դրանով վերջինս ցանկացել է այլ մարմնական վնասվածք պատճառել: (...):

Ինչ վերաբերում է հնարավոր այն դատողությանը, որ ցանկացած պարագայում, եթե Սուրեն Խալոյանը ցանկանար այդ կրակայրիչով մարմնական վնասվածք պատճառել՝ օրինակ հարվածելով տուժողներին, ապա այդ կապակցությամբ Դատարանը գտնում է, որ սույն գործով ձեռք բերված փաստական տվյալների առկայության պայմաններում այն կարող է կրել միայն ենթադրական բնույթ, մինչդեռ էլ, Դատարանը գտնում է, որ ցանկացած պարագայում սույն հարցի

քննարկումը չպետք է հիմնված լինի միայն ենթադրությունների մակարդակով առաջ քաշած տեսակետների կամ հնարավոր տարբերակների վրա: (...):

Սույն գործով ձեռք բերված փաստական տվյալների առկայության պայմաններում հիմնավորվում է, որ Սուրեն Խալոյանն ավորմանակին նմանվող կրակայրիչով ցանկացել է տուժողների մոտ օբյեկտիվ իրականության մեջ համոզմունք, տպավորություն ստեղծել, որ իր մոտ գտնվող առարկան իրական զենք է հանդիսանում, ընդ որում այդ առարկայով իր կողմից հանցանքի կատարման ժամանակ կատարված գործողություններից ակնհայտ է դառնում, որ վերջինս ցանկացել է, որ հենց տուժողների կողմից այն նկատվի և ընկալվի լինի որպես զենք: Ինչն ինքնին ավագակության հանցակազմի հատկանիշ է, բայց ոչ այն որակյալ դարձնող: Համենայն դեպս գործով ձեռք բերված ապացույցներում առկա է որևէ փաստարկ, որ Սուրեն Խալոյանն այդ առարկան որպես զենքի բուն նշանակությամբ օգտագործելու պատրվակով տուժողների մոտ վախ առաջացնելու կամ վերջիններին հնարավոր դիմադրությունը կտրելուց բացի, այլ նպատակ է ունեցել՝ մասնավորապես հարվածելու կամ այլ եղանակներով մարմնական վնասվածք պատճառելու:

Դատարանի նման մոտեցումը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ հանցավորի գիտակցմամբ և օբյեկտիվ իրականությամբ այդ առարկայով որպես ավորմանակի նպատակային նշանակությամբ՝ կրակելու միջոցով, չէր կարող տուժողներին վնաս պատճառվել:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը՝ Դատարանը գտնում է, որ քրեական գործով ձեռք բերված և հետազոտված ապացույցներով հիմնավորվում է, որ մեղադրյալին մեղսագրված արարքներում առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 1-րդ մասով նախատեսված հանցակազմը:

Հարկ է նկատել, որ նշված դատական ակտը դատախազության կողմից չի բողոքարկվել, իսկ մեղադրյալի պաշտպանի ներկայացրած վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը մերժել է՝ դատավճիռը թողնելով անփոփոխ:

Ներկայացվածից զատ, հարկ է վկայակոչել նաև հետևյալ դատական գործը. **թիվ 14110823 քրեական վարույթով** Էրիկ Համլետի Տեր-Օհանյանցի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով հարուցվել է հանրային քրեական հետապնդում հետևյալ աարաքի կատարման համար. «2023 թվականի հունվարի 16-ին՝ ժամը 22:30-ի սահմաններում, Էրիկ Համլետի Տեր-Օհանյանցը, (...) անսպասելի կերպով Գագիկ Սարգսյանին հրելով գցել է գեյրին և իր մոտ գտնվող՝ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված առարկայով՝ քարով, բազմաթիվ հարվածներ է հասցրել վերջինիս գլխին, պահանջելով նրա մոտ եղած գումարը, այնուհետև, Էրիկ Համլետի Տեր-Օհանյանցը Գագիկ Սարգսյանի տաբատի գրպանից հանելու եղանակով հափշտակել է 65.000 ՀՀ դրամ գումարը և դիմել փախուստի (...):»:

Նշված գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի 2024 թվականի հունիսի 17-ի դատավճռի համաձայն՝

«Վերոգրյալ հոդվածի բովանդակային վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ օրենսդրի կողմից ավազակության նշված որակյալ տեսակի սահմանումը պայմանավորված է դրա օբյեկտիվ կողմի դրսևորման առավել բարձր հանրային վրանգավորությամբ, ինչն արտահայտվում է անձի առողջության նկատմամբ առավել ինտենսիվորեն ներազդող միջոցի՝ գործիքի/ների կիրառելիությամբ: Սակայն, ավազակության որակյալ տվյալ տեսակի շրջանակներում ենթակա են դիտարկման, ոչ թե մարմնական վնասվածք պատճառելու հնարավորություն ունեցող բոլոր առարկաները, այլ միայն նրանք, որոնք նախապես պատրաստված կամ հարմարեցված են եղել մարմնական վնասվածք պատճառելու համար, ինչպես նաև զենքը: Անդրադառնալով մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կիրառելիությանը՝ Դատարանն արձանագրում է, որ հոդվածի դիսպոզիցիայում օգտագործվող նախապես եզրույթի ներքո անհրաժեշտ է դիտարկել նախքան մեղսագրվող արարքի օբյեկտիվ կողմի մեկնարկը՝ մինչև հանցանվոր իրադրության առաջացումը գոյություն ունեցող իրավիճակը: Այլ խոսքով, այն գործիքները, որոնք մարմնական վնասվածք պատճառելու համար պատրաստվել կամ հարմարեցվել են հենց դեպքի պահին, այլ ոչ թե՝ նախապես, քննարկվող որակյալ տարատեսակի առարկա հանդիսանալ չեն կարող:

Սույն քրեական գործով դատաքննության ընթացքում հետազոտված փաստական տվյալների և կատարված իրավական վերլուծությունների լույսի ներքո գնահատելով էրիկ Համլեդի Տեր-Օհանյանցի արարքում՝ մարմնական վնասվածք պատճառելու համար նախատեսված առարկայի նախապես հարմարեցված լինելու և ըստ այդմ ավազակության որակյալ հանցակազմի առկայության հարցը, Դատարանն արձանագրում է, որ քրեական գործով հաստատված հանգամանքներին ճիշտ քրեաիրավական գնահատական չի տրվել և էրիկ Համլեդի Տեր-Օհանյանցին մեղսագրվել է մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված առարկայի գործադրմամբ ավազակության հանցակազմը, մինչդեռ քրեական գործով ձեռք բերված ապացույցներով ողջամիտ կասկածից վեր ապացուցողական չափանիշով չի հիմնավորվում մեղադրյալի մեղքը՝ մարմնական վնասվածք պատճառելու համար նախատեսված առարկայի նախապես հարմարեցված լինելու հանգամանքի մեջ: Այդ մասին կարելի է ենթադրություն անել, կարծիք հայտնել, վարկած առաջադրել, սակայն արժանահավատորեն համարել ապացուցված, որպեսզի կասկած չմնա, հնարավոր չէ: (...)

Դատարանն արձանագրում է, որ որպես մեղադրյալի մոտ գտնված՝ մարմնական վնասվածք պատճառելու համար նախատեսված առարկայի նախապես հարմարեցված լինելու հանգամանք՝ հայտնաբերված քարը, ինքնըստինքյան նախապես հարմարեցված լինելու անվիճելի ապացույց չի կարող հանդիսանալ և պետք է գնահատվի միայն մարմնական վնասվածք պատճառելու համար նախատեսված առարկայի նախապես հարմարեցված լինելու հանգամանքի մասին վկայող այլ տեղեկությունների հետ համակցության մեջ,

որպիսիք սույն քրեական գործով բավարար չափով առկա չեն և նոր ապացույցներ հավաքելու հնարավորությունները սպառվել են»:

Վկայակոչված գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը ևս արձանագրել է հետևյալը. «(...) նշյալ ծանրացնող հանգամանքի առկայությունը փաստելու համար անհրաժեշտ է գործով ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորել, որ մարմնական վնասվածք պատճառելու համար առարկան կամ միջոցը նախապես հարմարեցվել է այդ նպատակի համար: Այսինքն, յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է հիմնավորել, որ հանցավորը տվյալ առարկան կամ միջոցը նախապես հարմարեցրել է մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելու համար: Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ «նախապես» եզրույթն անհրաժեշտ է դիտարկել արարքի օբյեկտիվ կողմը սկսելուց առաջ ընկած ժամանակահատվածի համար, ընդ որում՝ պարտադիր չէ ժամանակային տրական խզումը: Այստեղ էական է այն, որ հանցավորը մինչև արարքի օբյեկտիվ կողմը սկսելը կատարում է որևէ գործողություն/գործողություններ, որոնք ուղղված են առարկայի կամ միջոցի հարմարեցմանը»:

Մինչդեռ, կարծում ենք, ստորադաս դատարանները գնահատման չեն արժանացրել այն իրողությունը, որ մեղադրյալը նախապես ծագած դիտավորությամբ իր հետ վերցրել է մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես հարմարեցված առարկա հանդիսացող քար և դրանով նախօրոք պլանավորել է վնաս պատճառել տուժողին ու հափշտակել նրա մոտ առկա ամբողջ գումարը: Ստորադաս դատարաններն արժանահավատ են համարել նրա տված հակասական ցուցմունքն այն մասին, որ ինքը նախօրոք հիշյալ հանցագործության գործիք քարը վերցրել է դեպքի վայրից: Մինչդեռ, ինչպես տուժողի ցուցմունքով, այնպես էլ դատաքննության ընթացքում հետազոտված այլ ապացույցներով հերքվել է դեպքի վայրում՝ սալիկապատված սանհանգույցում և դրա առջևի տարածքում մոտավոր 15-20 սմ տրամագծով՝ անձին վնաս պատճառելու համար «հարմարավետ» քարի առկայության հանգամանքը: Մեղադրյալի հանցավոր վարքագիծը՝ կոնկրետ հափշտակություն կատարելու նպատակով Երևան քաղաքի Գյուլբենկյան 43/1 հասցեում գտնվող «Մաքս Օիլ» լցակայանի սանհանգույցում «դարանակալելու» և դեպքի վայրում քարերի բացակայության հանգամանքները ողջամտորեն հիմնավորում են մեղադրյալի կողմից հանցագործության գործիք հանդիսացող քարն իր հետ նախօրոք վերցնելու և այն անձին մարմնական վնասվածք պատճառելու նպատակով օգտագործելու դիտավորության առկայության մասին: Դատարանները հիմք են ընդունել մեղադրյալի տված հակասական ցուցմունքն այն մասին, որ քարը եղել է իր ձեռքի տակ ընկած, մինչդեռ մեղադրյալը դատարանում հայտնել է, որ ոչ միայն չի հիշում քարով հարվածելու հանգամանքը, այլ նաև չի հիշում այդ քարը ձեռք բերելու և այն դեն նետելու հանգամանքները: Բացի դրանից, դատարանները բավարար ուշադրության չեն արժանացրել այն հանգամանքը, որ մեղադրյալն իր կողմից հիշյալ հակաիրավական արարքը կատարելուց հետո հանցագործության գործիք հանդիսացող

քարը տեղափոխել է իր հետ դեպքի վայրից բավականին հեռու և այն դեն նետել՝ նպատակ ունենալով հանցագործության գործիքը թաքցնել, մինչդեռ դատաքննության ժամանակ մեղադրյալը չէր հիշում նաև այդպիսի հանգամանքի գոյության մասին: Միաժամանակ, պատշաճ իրավական գնահատականի չի արժանացել նաև տուժողի հայտնած այն հանգամանքը, որ Էրիկն իրեն հրել և գցել է գետնին, հարվածներ է հասցրել անմիջապես, քարը նրա մոտ եղել է նախօրոք:

Նման տրամաբանությամբ, փաստորեն, ցանկացած այլ դեպքում ևս կարելի է հիմք ընդունել մեղադրյալի ցուցմունքները և վերացականորեն, առանց օբյեկտիվ հիմքերի, ենթադրություններ անել այլ առարկայի կամ միջոցի, օրինակ, դանակի, հրազենի կամ անձանց վնաս պատճառելու համար նախատեսված այլ գործիքի «պատահական» դեպքի վայրում «հայտնվելու» հավանականության մասին:

Վերը շարադրված հանգամանքները հնարավորություն են տալիս փաստելու, որ մեղադրյալի մոտ հանցանքը կատարելու ժամանակ հանցագործության գործիք հանդիսացող քարը հանդիսացել է մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված և/կամ հարմարեցված առարկա, քանի որ «նախապես» բառը հարկավոր է դիտարկել կոնկրետ արարքի օբյեկտիվ կողմը սկսելուց առաջ ընկած ժամանակահատվածի կտրվածքով, ընդ որում՝ բոլորովին պարտադիր չէ առարկան պատրաստելու և/կամ հարմարեցնելու և մարմնական վնասվածք պատճառելու պահերի միջև ժամանակային տևական խզման առկայությունը: Այս հարցում էական է այն հանգամանքը, որ հանցավորը մինչև արարքի օբյեկտիվ կողմը սկսելը պետք է կատարած լինի գործողություն/գործողություններ, որոնք ուղղված կլինեն առարկայի կամ միջոցի հարմարեցմանը, այդ թվում՝ առարկան կարող է վերցվել նաև անմիջականորեն դեպքի վայրից և անմիջապես հարմարեցվել պլանավորված արարքի օբյեկտիվ կողմը կազմող գործողությունների կատարմանը:

Հարկ է նկատել, որ վերոգրյալ խնդիրներով պայմանավորված ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից սույն քրեական գործով բերվել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ընդունվել է վարույթ⁸: Ըստ այդմ, գտնում ենք, որ ՀՀ վճռաբեկ դատարանի առջև բարձրացվող իրավական հարցը հետևյալն է՝ «ՀՀ քրեական օրենսգրքի «հափշտակությունները» վերադառությամբ 30-րդ գլխում առկա՝ որպես հանցակազմի որակյալ հատկանիշ՝ զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարվող հափշտակությունների որակման միասնական պրակտիկա ձևավորելու համար դրանց տրվող չափորոշիչները հստակեցնելու համար: Մասնավորապես՝ հիշյալ ծանրացնող

⁸Սույն քրեական վարույթով մանրամասները տե՛ս թիվ ԵՊ1/0074/01/23 դատական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի հունվարի 17-ի դատավճիռը, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 8-ի և ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2025 թվականի հունվարի 27-ի՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին» որոշումները:

Առցանց հասանելի է՝ https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=48976645947654840 հղմամբ:

հանգամանքի համար պարտադիր է, արդյոք, մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկան մինչև հափշտակության դեպքի վայր գալը հանցավորի մոտ առկա լինելը, թե այն կարող է հանցավորը ձեռք բերի դեպքի վայրում՝ մինչև հափշտակության օբյեկտի վրա կողմի սկսելը կամ դրա ընթացքում (օր.⁹ հանցավորը հափշտակություն կատարելու համար մտնում է առևտրի կենտրոն և հասկանալով, որ առանց մարմնական վնասվածք պատճառելու առարկայի գործադրմամբ կամ դրա սպառնալիքով չի կարող իր նպատակին հասնել, տեղում վերցնում է նման առարկա և դրա գործադրմամբ կատարում հափշտակություն)»:

Միաժամանակ, այս կապակցությամբ հարկ է նկատել, որ ՀՀ վճռաբեկ դատարանը 2025 թվականի հուլիսի 11-ին կայացրած մեկ այլ որոշմամբ⁹ որոշակիորեն անդադարեցրել է «գեներալ կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ» որակյալ հատկանիշին, համադրելով նախկին և գործող քրեական օրենսգրքերը, մասնավորապես, արձանագրել է, որ «որակյալ է համարվում ոչ թե առարկայի կամ միջոցի պարզապես օգտագործումը, այլ մարմնական վնասվածք պատճառելու համար որոշակի նախապատրաստական գործողությունների իրականացումը, այն է՝ առարկան կամ միջոցը նախապես պատրաստելը կամ հարմարեցնելը: Այլ կերպ՝ արարքը քննարկվող ծանրացնող հանգամանքով որակելու համար, անհրաժեշտ է նախևառաջ ուշադրություն դարձնել հանցավորի սուբյեկտիվ ընկալմանը և վերջինիս կողմից օբյեկտիվորեն իրականացված գործողությունների բնույթին»:

Մասնավորապես, վերոնշյալ որակյալ հանգամանքն անձին մեղսագրելու համար, կարևոր է, որ վերջինս մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես որոշակի ակտիվ գործողություններ իրականացնի, այն է՝ պատրաստի կամ հարմարեցնի համապատասխան առարկան կամ միջոցը: Հաշվի առնելով «պատրաստել» կամ «հարմարեցնել» արտահայտությունների լեզվաբացատրական նշանակությունը, ինչպես նաև դրանց վերաբերյալ առկա դոկտրինալ մեկնաբանությունները՝ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ առարկան կամ միջոցը պատրաստել ասելով պետք է հասկանալ ցանկացած գործողություն, որի արդյունքում մարմնական վնասվածք պատճառելու համար պատրաստի առարկա կամ միջոց է ստացվում կամ ստեղծվում: Ինչ վերաբերում է առարկան կամ միջոցը հարմարեցնելուն, ապա այն ենթադրում է հանցավորի կողմից արդեն իսկ գոյություն ունեցող առարկայի կամ միջոցի նկատմամբ որևէ ներգործության իրականացում՝ լրիվ կամ մասնակի կառուցվածքային փոփոխության ենթարկում, կարգավորում կամ ձևափոխում, որպեսզի դրանք առավել արդյունավետ կամ հարմար լինեն օգտագործման համար (օրինակ՝ մետաղյա ձողը կամ խոհանոցային դանակը սրելը, մետաղական մալուխը ընդհանուր զանգվածից կտրելով առանձնացնելը և այլն):

⁹Մանրամասն տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Ռուստամ Շավալյանի գործով 2025 թվականի հուլիսի 11-ի թիվ ԵԴ/1157/01/19 որոշումը և, մասնավորապես, որոշման 14-րդ կետը:

Ընդ որում, Վճռաբեկ դատարանը հանցագործության նախապատրաստության ինստիտուտի վերլուծության շրջանակներում համանման դիրքորոշում է արտահայտել հանցագործության գործիքները կամ միջոցները հարմարեցնելու հասկացության վերաբերյալ՝ փաստելով, որ *հանցագործության գործիքները և միջոցները հարմարեցնել է համարվում դրանց կառուցվածքի և ձևի այնպիսի փոփոխությունը, որն անհրաժեշտ է հանցավոր ուղնձգությունն իրականացնելու համար (Տե՛ս, mutatis mutandis, Վճռաբեկ դատարանի՝ Կարեն Հովհաննիսյանի և մյուսների վերաբերյալ գործով 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԿԴ/0087/01/12 որոշումը)*:

Ըստ այդմ, թիվ ԵԴ1/0074/01/23 դատական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի ակնկալվող որոշմամբ կբացահայտվի նաև սույն իրավական դիրքորոշումների տարածման հնարավորությունն ու իրավաչափությունն ավագակության հանցակազմի և կոնկրետ այդ քրեական գործի փաստական հանգամանքների նկատմամբ:

Ինչ վերաբերում է հանցակիցներից մեկի կողմից զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմանը, ապա հարկ է արձանագրել, որ այն դեպքում, երբ՝

ա) ավագակության հանցակիցները մինչև հանցանքի կատարումը զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի կիրառման վերաբերյալ պայմանավորվածություն են ձեռք բերել, ինչպես նաև այն դեպքում, երբ հանցակիցները նախապես իմացել են, որ իրենցից մեկի մոտ առկա է զենք կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկա, որը կարող է օգտագործվել արարքը կատարելու ժամանակ և խմբի անդամները գիտակցել են զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի կիրառման հնարավորությունը, բոլոր հանցակիցների արարքը պետք է որակել զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարված ավագակություն:

բ) իրենցից մեկի մոտ զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի առկայության մասին ավագակության հանցակիցներն իմացել են հանցագործությունը կատարելու ընթացքում և հանցանքի կատարումը շարունակել են արդեն զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի կիրառմամբ, բոլոր հանցակիցների արարքը ենթակա է որակման որպես զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ կատարված ավագակություն:

Վերոգրյալի հետ մեկտեղ հարկ է արձանագրել, որ այն դեպքում, երբ ավագակության հանցակիցներից մեկի մոտ զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի

առկայության մասին մյուս հանցակիցները չեն իմացել ո՛չ նախքան հանցանքի կատարումը և ո՛չ դրա ընթացքում, ապա առկա է հանցակցի սահմանազանցում:

Անդրադառնալով գործնականում ծագած խնդրահարույց իրավիճակներին՝ կապված ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով (ինչպես նաև 253-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 254-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով)՝ *«տեխնիկական միջոցի, հատուկ հարմարեցված սարքավորման կամ այլ առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով»* կատարված լինելու և որպես այդպիսին որակելու խնդրի հետ՝ հարկ է, մասնավորապես, նկատել հետևյալը.

Քննարկման առարկա ծանրացնող հանգամանքի առնչությամբ գործնականում ծագող հիմնական խնդիրը վերաբերում է *«տեխնիկական միջոց»*, *«հատուկ հարմարեցված սարքավորում»*, *«այլ առարկա»*, *«միջոց»*, *«այլ եղանակ»* հասկացությունների սահմանազանցմանը, գույքի *«պաշտպանության»* և *«պաշտպանության»* համար *«նախատեսված լինելու հանգամանքի»* պարզման հարցում առկա բարդություններին:

Հարկ է նկատել, որ քննարկվող ծանրացուցիչ հանգամանքի էությունն այն է, որ դրա պարագայում հանցավորը **լրացուցիչ միջոցներ է գործադրում**, որպեսզի հանցագործությանը (տվյալ դեպքում՝ ավագակության կատարմանը) խոչընդոտող **արգելքներ հաղթահարի**: Մասնավորապես, նա **պետք է գիտակցի**, որ տեխնիկական միջոց, հատուկ հարմարեցված սարքավորում կամ այլ առարկա կամ միջոց գործադրելով կամ այլ եղանակով ոչնչացում, վնասում կամ շրջանցում է գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոց¹⁰:

Մասնավորապես, առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքի պարզումը, թե, համաձայն ձևավորված իրավակիրառ պրակտիկայի, նախաքննական մարմինը կամ դատարանն ինչ ելակետային տվյալների հաշվառմամբ են հափշտակության արարքները որակում որպես *«այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը շրջանցելով»* կատարված արարքներ:

Այդ կապակցությամբ հարկ է նկատել, որ ըստ ձևավորված պրակտիկայի՝ հափշտակության արարքները որակվում են *«այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը շրջանցելով»* այն պարագայում, երբ գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը հանցանք կատարող անձի կողմից չի վնասվում, այլ շրջանցվում է: Օրինակ՝ այն պարագայում, երբ հափշտակությունն իրականացվում է հագուստի խանութների մուտքի հատվածում տեղադրված

¹⁰Սեփականության դեմ ուղղված հանցագործություններն ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքի (գիտագործական մեկնաբանություններ): Ս.Վ. Առաքելյան, Գ.Ս. Բաղդասարյան, Պ.Դ. Պետրոսյան: Եր.: Արդարադատության ակադեմիա, 2024, էջ 53:

ազդանշանային համակարգերի շրջանցմամբ, հագուստի հափշտակության դեպքերով արարքները որակվում են վկայակոչված կետի հենց այդ ձևակերպմամբ, իսկ ավտոմեքենայի բաց պատուհանից, կամ ավտոմեքենայի դուռը, բեռնախցիկը բանալիով փակված չլինելու հանգամանքից օգտվելով հափշտակության դեպքերով դատարաններն արարքները որակում են որպես հասարակ հափշտակություն՝ այն մեկնաբանությամբ, թե գույքի օրինական տիրապետողը պետք է ակտիվ գործողություններ ձեռնարկի գույքի պաշտպանության կամ պահպանության համար և անձի՝ միայն ֆիզիկական ներթափանցումը բավարար չէ քննարկվող ծանրացնող հատկանիշով որակելու համար:

ՀՀ քրեական նախկին և գործող օրենսգրքերի համադրումը.

Անդրադառնալով ավազակության հանցակազմի սահմանման հարցում ՀՀ քրեական նախկին և գործող օրենսգրքերի համադրմանը՝ հարկ է նկատել, որ չնայած որոշակի նմանություններին, նոր իրավադրույթի ձևակերպումն արմատապես տարբերվում է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 1-ին մասով տրված սահմանումից, որն ուներ հետևյալ բովանդակությունը՝ «Ավազակությունը՝ ուրիշի գույքը հափշտակելու նպատակով հարձակումը, որը կատարվել է կյանքի կամ առողջության համար վրանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով»:

Նոր իրավակարգավորմամբ՝ մեկ այլ դրույթով արդեն իսկ տրվել է հափշտակության հասկացությունը և **ուրիշի գույքի** մասին նշում կատարելու անհրաժեշտությունը բացակայում է: Բացի դրանից, ներկայումս գործող ձևակերպումը լուծել է տեսության մեջ վաղուց քննարկվող խնդիրը, համաձայն որի՝ նախկին ձևակերպմամբ ավազակությունը չէր կարող «դասական» իմաստով համարվել հափշտակություն, քանի որ հափշտակության բոլոր տեսակները ենթադրում են նյութական հանցակազմ, իսկ ավազակությունը, ըստ օրենսդրական նկարագրման եղանակի, ձևական, իսկ որոշ տեսաբանների կարծիքով՝ հատված հանցակազմ էր: Այսինքն՝ նոր իրավակարգավորմամբ՝ ավազակությունը ևս ձևակերպվել է նյութական հանցակազմով և ավարտված է համարվում այն պահից, երբ հանցավորը հափշտակված գույքն ապօրինաբար տնօրինելու կամ օգտագործելու իրական հնարավորություն է ունեցել: Սա կարևոր փոփոխություն է և դրա արդյունքում, բազմաթիվ դեպքեր, որոնք նախկին իրավակարգավորման գործողության պայմաններում որակվում էին որպես ավարտված ավազակություն, նոր կարգավորմամբ կարող են որակվել որպես ավազակության փորձ կամ նախապատրաստություն (կախված իրավիճակից)¹¹:

ՀՀ նոր քրեական օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույցի համաձայն՝ օրենսդրական նոր ձևակերպմամբ նախատեսված չէ նաև «**հարձակում**» եզրույթը, ինչը ևս արդա-

¹¹Վերը նշված մի շարք հարցերի մասին առավել մանրամասն տե՛ս ՀՀ նոր քրեական օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, Ա. Գաբուգյան, Ա. Մարգարյան, Ս.Սիմոնյան, փորձագիտական խմբի համակարգող՝ Գ. Ղազինյան, խորհրդատու փորձագետ՝ Հ. Ասատրյան, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022թ., էջեր 317-319:

րացված և ճիշտ մոտեցում է: «Հարձակում» ասվածը միշտ ենթադրում է ֆիզիկական ակտիվ ագրեսիա, բռնության ակտիվ դրսևորում, մինչդեռ քիչ չեն այն դեպքերը, երբ ավազակության պարագայում որևէ ակտիվ, ագրեսիվ գործողություն որպես այդպիսին չի կատարվում, այլ, օրինակ՝ ուրիշի թանկարժեք գույքին տիրանալու նպատակով նրա կերակրի մեջ թույն են լցնում, ինչի հետևանքով անձը զրկվում է կյանքից կամ նրա առողջությանը վնաս է պատճառվում, իսկ վերջինիս գույքը հափշտակվում է: Անշուշտ՝ նման դեպքերը պետք է որակել որպես ավազակություն, սակայն «հարձակման» դասական հայեցակարգում դրանք չեն ներառվում: Այս պատճառով օրենսդիրն արդարացիորեն հրաժարվել է այդ եզրույթից և բռնության ցանկացած դրսևորմամբ (այս հասկացության մասին վերը խոսվել է) հափշտակությունը, նոր օրենսգրքի համաձայն, պետք է որակվի որպես ավազակություն:

Հարկ է նկատել նաև, որ նոր իրավակարգավորման տրամաբանության համաձայն՝ կարևոր չէ նաև դրսևորված բռնության բնույթը և վտանգավորությունը, էական չէ՝ այն կյանքի կամ առողջության համար վտանգավոր է, թե՛ ոչ. ցանկացած բռնության կամ դրա սպառնալիքի արդյունքում կատարված հափշտակությունը պետք է որակել որպես ավազակություն: ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, որպես կողոպուտի ծանրացնող հանգամանք, նախատեսում էր *«զուգորդվել է կյանքի կամ առողջության համար ոչ վրանգավոր բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով»*: Նոր ձևակերպմամբ՝ այս ծանրացնող հանգամանքը նախատեսված չէ և նման դեպքերը, ինչպես արդեն իսկ նշել ենք, պետք է որակվեն որպես ավազակություն:

Հատկանշական է, որ նոր օրենսդրությամբ զգալի փոփոխությունների են ենթարկվել նաև ավազակության ծանրացնող հանգամանքները: Ստորև կքննարկվեն ավազակության այն որակյալ տեսակները, որոնք նոր են կամ արմատապես վերափոխվել կամ վերաձևակերպվել են:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը, համապատասխանաբար, սահմանում են հետևյալ ծանրացնող հանգամանքները՝ *«1) հողի կնոջ նկատմամբ» և «2) անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ»*: Նշված կատեգորիայի անձանց նկատմամբ կատարված ավազակության առավել մեծ վտանգավորությունն ակնհայտ է և նշված ծանրացնող հանգամանքների նախատեսումն պետք է արդարացված համարել: Հղիության հանգամանքը՝ որպես սույն որակյալ հանցակազմի հատկանիշ, պետք է գիտակցվի հանցավորի կողմից, այլապես այն չի կարող վերագրվել վերջինիս: Այսինքն՝ հանցավորը պետք է հաստատապես իմանա կնոջ հղի լինելու հանգամանքի և հենց հղի կնոջ նկատմամբ հակաիրավական արարքի կատարման մասին:

Ինչ վերաբերում է «անօգնական վիճակում գտնվող անձ» հասկացությունը, ապա հարկ է նշել, որ այն տրված է ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, համաձայն որի՝ *«անօգնական վիճակում գտնվող» անձ, որն իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված ի վիճակի չէ դիմադրու-*

թյուն ցույց տալ կամ ղեկավարել իր արարքը կամ գիտակցել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը»:

Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է նաև *ավազակությունն առանձին դաժանությամբ կատարելը*: Քննարկվող որակյալ տեսակի նախատեսումը դիտարկվում է ճիշտ, քանի որ գործնականում քիչ չեն այն դեպքերը, երբ ավազակությունը կատարվում է առանձին դաժանության դրսևորումներով, տուժած անձի կամ նրա մերձավորի նկատմամբ այնպիսի միջոցներ, գործիքներ, նյութեր և այլն, գործադրելով, որոնք վերջիններիս պատճառում են ուժեղ ֆիզիկական ցավ, կամ նրանց հասցնում են բազմաթիվ հարվածներ, կտրվածքներ՝ ուժեղ ցավ կամ տառապանք պատճառելու նպատակով: Այս իրավիճակներին պետք է տրվի ավելի խիստ քրեաիրավական գնահատական, ինչը կարող է իրագործվել նոր իրավակարգավորումների շրջանակներում:

Հարկ է նաև նկատել, որ որպես քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանք՝ օրենսդրությամբ նախատեսվել է նաև *զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ ավազակություն կատարելը*: Համանման ծանրացնող հանգամանք նախատեսված էր նաև ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով՝ *«Ձենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ»*: Նոր ձևակերպման հիմնական տարբերությունը կայանում է նրան, որ դեպքի վայրից վերցված առարկաները, եթե դրանք չեն ներառվում «զենք» հասկացության մեջ («Ձենքի մասին» ՀՀ օրենքի համատեքստում), չեն առաջացնում քննարկվող ծանրացնող հանգամանքներով հանցակազմը: Օրինակ՝ եթե հանցավորը ռեստորանում սեղանի վրայից վերցված շշով հարվածում է տուժածի գլխին և հափշտակում է վերջինիս դրամապանակը, ապա այլ ծանրացնող հանգամանքների բացակայության պարագայում՝ արարքը պետք է որակել որպես «հասարակ» ավազակություն, այսինքն՝ քննարկվող հոդվածի 1-ին մասով: Հարկ է փաստել, որ, իրոք, տարբեր է վտանգավորությունն այն իրավիճակների միջև, երբ գործիքը կամ միջոցն անձը նախապես պատրաստել կամ հարմարեցրել է առողջությանը կամ կյանքին վնաս պատճառելու համար և այն իրավիճակների միջև, երբ դրանք պատահաբար, իրադրությանին են հայտնվում հանցավորի տիրապետության տակ: Նորից շեշտենք, որ խոսքը չի վերաբերում այն առարկաներին, որոնք «զենք» են հանդիսանում¹²:

Որպես քննարկվող հանցակազմի ծանրացնող հանգամանք նախատեսվել է նաև ավազակությունը՝ *«Տեխնիկական միջոցի, հատուկ հարմարեցված սարքավորման կամ այլ առարկայի կամ միջոցի գործադրմամբ կամ այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախապես պատրաստված սարքավորումը,*

¹²Վերը նշված ծանրացնող հանգամանքների շուրջ վերլուծությունը մանրամասն տե՛ս ՀՀ նոր քրեական օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, Ա. Գաբուլյան, Ա. Մարգարյան, Տ.Սիմոնյան, փորձագիտական խմբի համակարգող՝ Գ. Ղազինյան, խորհրդատու փորձագետ՝ Հ. Ասատրյան, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022թ., էջեր 319-321:

համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով» կատարելը: Չնայած թվացյալ բարդությանը, այս ծանրացնող հանգամանքի նման ձևակերպման իմաստը հանգում է նրան, որ հանցավորը պետք է գիտակցի, որ **որոշակի ֆիզիկական արգելք է հաղթահարում**: Այն դեպքերում, երբ անձը որևէ ֆիզիկական արգելք չի հաղթահարում, այլ օրինակ՝ ուղղակի մտնում է պահեստի բաց դռնով կամ բացված վիճակում գտնվող չիրկիզվող պահարանից է կատարում ավազակության եղանակով հափշտակությունը, ապա այն չի դիտվի սույն ծանրացնող հանգամանքով կատարված: Իսկ այն դեպքում, երբ հանցանք կատարած անձը որոշակի միջոցների կամ առարկաների գործադրմամբ հաղթահարում է արգելք՝ գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը ոչնչացնելով, վնասելով կամ շրջանցելով, ապա առկա է քննարկվող հափշտակության տեսակի ծանրացնող հանգամանքը: Նախկին իրավակարգավորմամբ՝ պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելու եղանակով ավազակության ծանրացնող հանցակազմի փոխարեն, նախատեսվել է վերը նշված իրավակարգավորումը: Եթե այլ հափշտակության եղանակների պարագայում (գողություն, կողոպուտ) բնակարան մուտք գործելով հափշտակության կատարումը նախկին իրավակարգավորմամբ նախատեսվել էր որպես հանցակազմի առավել ծանրացնող հանգամանք, ապա ավազակության պարագայում դրսևորվել էր «պարադոքսալ» մոտեցում և բնակարան մուտք գործելով ավազակությունը նախատեսվել էր որպես ծանրացնող հանգամանք հողվածի երկրորդ մասով՝ պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելու հետ մեկտեղ: Նոր իրավակարգավորմամբ այս բացը շտկվել է և բնակարան մուտք գործելով ավազակությունը նախատեսվել է որպես հանցակազմի առավել ծանրացնող հանգամանք: Ընդ որում՝ բնակարանի պարագայում, բացարձակապես էական չէ՝ հանցավորը որևէ ֆիզիկական արգելք հաղթահարել է ապօրինի մուտք գործելու համար, թե ոչ: Այս դեպքում՝ անգամ բաց դռնից, անխոչընդոտ, սակայն ապօրինի (առանց բնակարանում օրինական հիմքերով բնակվող անձի կամքի կամ այն անտեսելով) բնակարան մուտք գործելով կատարված ավազակությունը պետք է որակել հանցակազմի առավել ծանրացնող հանգամանքով:

Հարկ է նկատել նաև, որ «բնակարան ապօրինի մուտք գործելով» ծանրացնող հանգամանքին ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է գողության հանցակազմը մեկնաբանելիս Արայիկ Հակոբյանի և Արտակ Գրիգորյանի գործով կայացրած որոշմամբ, (...):

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կատարված գողությունը բնակարան ապօրինի մուտք գործելու ծանրացնող հանգամանքով որակելու համար անհրաժեշտ է հավաստել հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը՝ բնակարան մուտք գործելը եղել է ապօրինի և հափշտակության դիտավորությունը ծագել է նախքան այնպեղ ներթափանցելը:

Անդրադառնալով խաբեությամբ բնակարան ապօրինի մուտք գործելու եղանակին՝ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ խաբեությունը դիտավոր-

րությանը իրականությունը խեղաթյուրելն է, անձին դիտավորյալ մոլորության մեջ գցելը, որը կարող է իրականացվել կոնկրետ փաստերը խեղաթյուրելով, իրականում գոյություն չունեցող կեղծ տվյալներ հաղորդելով, իրական մտադրության մասին լռելով կամ այլ եղանակներով, ինչի արդյունքում մոլորության մեջ ընկած բնակարանի սեփականատերերը կամ այլ փորապետողը թույլատրում է կամ չի խոչընդոտում հանցավորի մուտքը բնակարան: Այլ կերպ՝ թեև տվյալ դեպքում հանցավորը ստանում է տուժողի «համաձայնությունը», այնուամենայնիվ դա որևէ նշանակություն չի կարող ունենալ, քանի որ նման «համաձայնությունը» ձեռք է բերվում խաբեությամբ անձի կամքի և գիտակցության վրա ներագդելու, նրան դիտավորությամբ մոլորության մեջ գցելու արդյունքում, հետևաբար ցանկացած պարագայում պետք է դիտարկվի որպես անձի կամքին հակառակ վերջինիս բնակարան ապօրինի մուտք գործել¹³:

ՀՀ քրեական նոր օրենսգրքում, որպես ավազակության առավել ծանրացնող հանգամանք, նախատեսվել է նաև «պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով» կատարելը (ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով): Նկատի ունենալով այն փաստը, որ ՀՀ քրեական օրենսգրքում որպես հափշտակության ինքնուրույն տեսակ ներկայումս նախատեսված չէ ՀՀ քրեական նախկին օրենսգրքի 180-րդ հոդվածով նախատեսված «առանձնակի արժեք ունեցող առարկաներ հափշտակելու» հանցակազմը, այն որպես ծանրացնող հանգամանք առանձին հստակորեն նախատեսվել է հափշտակության մի շարք եղանակների պարագայում:

Նշված հանցակազմի որակման խնդիրների քննարկման համատեքստում հարկ է նաև փաստել, որ եթե անձի մեկ արարքում միաժամանակ առկա են հանցակազմի ծանրացնող և առավել ծանրացնող հանգամանքները, ապա արարքը որակվում է հոդվածի միայն առավել ծանրացնող հանգամանքները նախատեսող մասով: Այս իրավակարգավորման առկայությունը ևս հույժ կարևոր է՝ հանցագործությունների որակման և եզակի հանցագործությունը հանցագործությունների բազմակիությունից տարբերակելու անհրաժեշտության տեսանկյունից: Օրինակ՝ եթե անձը կատարել է ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ բնակարան ապօրինի մուտք գործելով ավազակություն, և միևնույն ժամանակ տուժողը եղել է հղի վիճակում, ինչը, որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ապա նրա արարքը ենթակա է որակման բացառապես որպես առավել ծանրացնող հանգամանքով նախատեսված բնակարան ապօրինի մուտք գործելով ավազակություն, իսկ այլ ծանրացնող հանգամանքները պետք է նկարագրվեն և հաշվի առնվեն բացառապես պատժի անհատականացման գործընթացում:

¹³Մանրամասն տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Արայիկ Հակոբյանի և Արտակ Գրիգորյանի գործով 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԱԲԴ/0063/01/17 որոշումը:

Եզրակացություն

Ծանրացնող հանգամանքներում կատարված հափշտակությունների ձևակերպումներում առկա՝ «*տեխնիկական միջոց*», «*հալուկ հարմարեցված սարքավորում*», «*այլ առարկա*», «*միջոց*», «*այլ եղանակ*», «*գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորում, համակարգ, կառույց կամ այլ միջոց*» հասկացությունների բացատրությունն օրենսդիրը ներկայումս չի տվել, սակայն գտնում ենք, որ կոկրետ գործերով ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացված և/կամ կայացվելիք նախադեպային որոշումներում դրանց տրվող հստակ մեկնաբանությունները համարժեքորեն կուղղորդեն իրավակիրառ պրակտիկայի կայացումն ու զարգացումը:

Ըստ ձևավորված իրավակիրառ պրակտիկայի՝ հափշտակության արարքները որակվում են «*այլ եղանակով գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը շրջանցելով*» այն պարագայում, երբ գույքի պաշտպանության կամ պահպանման համար նախատեսված սարքավորումը, համակարգը, կառույցը կամ այլ միջոցը հանցանք կատարող անձի կողմից չի ոչնչացվում, չի վնասվում, այլ շրջանցվում է:

Այլ է մոտեցումն այն դեպքերում, երբ ավտոմեքենայի բաց պատուհանից կամ ավտոմեքենայի դուռը, բեռնախցիկը բանալիով փակված չլինելու հանգամանքից օգտվելով՝ անձը կատարում է հափշտակություն: Նման դեպքերով իրավակիրառ պրակտիկայում արարքները որակվում են որպես հասարակ հափշտակություն, այն մեկնաբանմամբ, որ գույքի օրինական տիրապետողը պետք է ակտիվ գործողություններ ձեռնարկի գույքի պաշտպանության կամ պահպանության համար և անձի՝ միայն ֆիզիկական ներթափանցումը բավարար չէ արարքը քննարկվող ծանրացնող հատկանիշով որակելու համար:

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով, այն է՝ «*զենքի կամ մարմնական վնասվածք պատճառելու համար նախապես պատրաստված կամ հարմարեցված առարկայի կամ միջոցի գործադրմամբ*» ավազակության դեպքերի որակման խնդրահարույց լինելուն, ապա, սույն հոդվածի շրջանակներում այն քննարկվել է, և արդեն իսկ վարույթ ընդունված վճռաբեկ բողոքի առկայության պայմաններում, լիափոխ ենք, որ ՀՀ վճռաբեկ դատարանի սպասվող նախադեպային որոշմամբ հստակորեն կկարգավորվեն սույն որակյալ հատկանիշի հետ կապված գործնական խնդիրները:

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող քրեական օրենսդրությամբ փոփոխվել են մի շարք կարգավորումներ, տեղ են գտել նոր ձևակերպումներ և մոտեցումներ, սակայն, այնուամենայնիվ, որոշ հարցադրումներ դեռևս պրակտիկայում լիարժեք լուծումներ չեն ստացել, որպիսի պայմաններում իրավիճակն կարող է էականորեն բարելավվել ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացվելիք որոշումներում առկա խնդիրների շուրջ կոնկրետ իրավական դիրքորոշումների ձևավորման և համապատասխան ուղղություններով նախաքննական ու դատական պրակտիկայի զարգացման շնորհիվ:

Գրականության ցանկ (reference list, список литературы)

1. 2017 թվականի նոյեմբերի 17-ին ընդունված «Դատախազության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-198-Ն):

Law of RA “On Prosecution” adopted on November 17, 2017 (NL-198-N).

2. ՀՀ քրեական օրենսգիրք (ընդունված՝ 2021 թվականի մայիսի 05-ին և ուժի մեջ մտած 2022 թվականի հուլիսի 01-ից, ՀՕ-199-Ն):

Criminal Code of RA (adopted on May05, 2021 and entered into force on July 1, 2022, NL-199-N).

3. 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 01-ին ուժը կորցրած ՀՀ քրեական օրենսգիրք (ՀՕ-528-Ն):

Criminal Code of RA adopted on April18, 2003 and repealed on July 1, 2022 (NL-528-N).

4. Արայիկ Հակոբյանի և Արտակ Գրիգորյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ ԵԱԲԴ/0063/01/17 որոշում:

Decision of the the Cassation Court of RA dated 20.12.2019 in the case of Arayik Hakobyan and Artak Grigoryan No. EAQD/0063/01/17.

5. Արևիկ և Ծովինար Սահակյանների գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2012 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ԱՐԴ/0176/01/11 որոշում:

Decision of the the Cassation Court of RA dated 01.11.2012 in the case of Arevik and TsovinarSahakyans No. ARD/0176/01/11.

6. Ժ. Դուկասյանի և Ա. Դևոնդյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2013 թվականի փետրվարի 15-ի թիվ ԵԷԴ/0091/01/11 որոշում:

Decision of the Cassation Court of RA dated 15.02.2013 in the case of Tj. Ghukasyan and A. GhevondyanNo. EED/0091/01/11.

7. Ռուստամ Շավալյանի վերաբերյալ գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2025 թվականի հուլիսի 11-ի թիվ ԵԴ/1157/01/19 որոշում:

Decision of the Cassation Court of RA dated 11.07.2025 in the case of Rustam Shavalyan No. ED/1157/01/19.

8. Թիվ ԵԴ/1380/01/22 դատական գործով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի քրեական դատարանի՝ 18.04.2023 թվական դատավճիռ և ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 04.12.2023 թվական որոշում:

Judgment of the Criminal Court of First Instance of Yerevan City of General Jurisdiction dated 18.04.2023and decision of the Criminal Court of Appeal of RA dated 04.12.2023 in court case No. ED/1380/01/22.

9. Թիվ ԵԴ/1/0074/01/23 դատական գործով Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2024 թվականի հունվարի 17-ի դատավճիռ, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2024 թվականի հոկտեմբերի 8-ի և ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2025 թվականի հունվարի 27-ի՝ «Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին» որոշումներ:

Judgment of the Criminal Court of First Instance of Yerevan City of General Jurisdiction dated 17.01.2024, decisions of the Criminal Court of Appeal of RA dated

08.10.2024 and of the Cassation Court of RA dated 27.01.2025«On the acceptance of the cassation appeal for proceedings».

10. Սեփականության դեմ ուղղված հանցագործություններն ըստ ՀՀ քրեական նոր օրենսգրքը (գիտագործնական մեկնաբանություններ): Ս.Վ. Առաքելյան, Գ.Ս. Բաղդասարյան, Պ.Դ. Պետրոսյան:- Եր.: Արդարադատության ակադեմիա, 2024,- 207 էջ:

Crimes against property according to the new Criminal Code of the Republic of Armenia (scientific and practical comments): S.V. Arakelyan, G.S. Baghdasaryan, P.D. Petrosyan. - Yerevan: Academy of Justice, 2024, -207 pages.

11. ՀՀ նոր քրեական օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, Ա. Գաբուզյան, Ա. Մարգարյան, Տ.Սիմոնյան, փորձագիտական խմբի համակարգող՝ Գ. Ղազինյան, խորհրդատու փորձագետ՝ Հ. Ասատրյան, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022թ., 497 էջ:

Guide to the interpretation of conceptual approaches and new institutions included in the new Criminal Code of the Republic of Armenia, A. Gabuzyan, A. Margaryan, T. Simonyan, expert group coordinator: G. Ghazinyan, consulting expert: H. Asatryan, Council of Europe, July 2022, 497 pages.

12. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգային լուծումների, նորարարական մոտեցումների և հիմնական ինստիտուտների մեկնաբանման գործնական ուղեցույց, Հ. Ղուկասյան, Դ. Մելքոնյան, Ա. Նիկողոսյան, Եվրոպայի խորհուրդ, հուլիս, 2022թ., 613 էջ:

Practical guide to the interpretation of conceptual solutions, innovative approaches and main institutions of the new Criminal Procedure Code of the Republic of Armenia, H. Ghukasyan, D. Melkonyan, A. Nikoghosyan, Council of Europe, July 2022, 613 pages.

Artyom Ovsyan

Deputy Head of Department for Crimes against Property of the Prosecutor General's Office of the Republic of Armenia, First Rank Counsellor of Justice

BRIGANDAGE: SOME THEORETICAL AND PRACTICAL ISSUES¹⁴

Abstract

The article is devoted to the definition of the concept of embezzlement by the Criminal Code of the Republic of Armenia, the study of certain types of thefts and, in particular, the crime of robbery provided for by Article 252 of the Criminal Code of the Republic of Armenia, the identification of certain theoretical and practical problems related to the mentioned crime and the presentation of possible ways to solve them.

In the article, the author studied the relevant preliminary investigation and judicial practice, conducted a combined and comprehensive analysis of it, as a result of which general observations aimed at further legislative developments and specific proposals aimed at the development of practice were presented.

The work also addressed the comparison of the Criminal Code of the Republic of Armenia adopted on April 18, 2003 and the current Criminal Code of the Republic of Armenia from the point of view of the peculiarities and developments of the definition of embezzlement and, in particular, the crime of brigandage, including in the context of the separation of brigandage and other types of embezzlement or their qualitative characteristics.

Keywords: embezzlement; brigandage; use of violence or threat of it; qualitative characteristics of brigandage; tool or means pre-prepared or adapted in advance.

¹⁴ The article was presented on 30.04.2025 and was reviewed on 09.06.2025.

Артём Овсян

Заместитель начальника управления по преступлениям против собственности Генеральной прокуратуры Республики Армения, советник юстиции первого класса

РАЗБОЙ. НЕКОТОРЫЕ ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ВОПРОСЫ¹⁵

Абстракт

Статья посвящена определению понятия хищения в Уголовном Кодексе Республики Армения, исследованию отдельных видов хищений и, в частности, состава преступления разбоя, предусмотренного статьей 252 Уголовного Кодекса Республики Армения, выявлению некоторых теоретических и практических проблем, связанных с указанным преступлением, и представлению возможных путей их решения.

В статье автором изучена соответствующая доследственная и судебная практика, проведен ее комплексный и всесторонний анализ, представлены общие замечания, направленные на дальнейшее совершенствование законодательства, и конкретные рекомендации, направленные на развитие практики.

В работе также делается сопоставление Уголовного Кодекса Республики Армения, принятого 18 апреля 2003 года, и действующего Уголовного кодекса Республики Армения с точки зрения особенностей и развитий определения хищений и, в частности, состава преступления разбоя, в том числе в контексте разграничения разбоя и иных видов хищения или их квалифицированные признаки.

Ключевые слова: хищение; разбой; применение насилия или угроза его применения; квалифицированные признаки разбоя; заранее приготовленный или приспособленный предмет или средство.

¹⁵Статья была представлена 30.04.2025 и прошла рецензирование 09.06.2025.